# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/25 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 10.11.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/25 գնման պայմանագրում 17.03.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՊՍ զեկուցագիր: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրի 1.3 կետում և Հավելված N2-ում նշված աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.7 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7**
**10.11.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/25 գնման պայմանագրի**

ք. Երևան 17.03. 2026թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԿԻՐ ՔԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ղազարյանի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե.Գևորգյանի (այսուհետ՝ երկուսը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 09.10.2023թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 10.11.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-23/25 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.7 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 1.3 կետում և Հավելված N2-ում նշված աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող բոլոր տողերում «495» թիվը փոխարինել «525» թվով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047322
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
**Գործընկեր-1**
«ԿԻՐ ՔԱՐ» ՍՊԸ
ք. Գյումրի, Կորի 33փ տուն 11
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 20501222058310002
ՀՎՀՀ 05543213
Տնօրեն՝

_____ Ա. Ղազարյան
(ստորագրություն) Կ.Տ

**Գործընկեր-2**
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք.Երևան, Տիգրան Մեծ 63/14
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 09210417
Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն) Կ.Տ